

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-113>

ՀԱՅԿՈՒՇ ՀԱՐՈՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ,
ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական*

HAYKUSH HAROYAN

*PhD Student at the Chair of Criminal Procedure and Criminology,
Faculty of Law, Yerevan State University,
Assistant to the Judge at the Anti-Corruption Court of Armenia*

АЙКУШ АРОЯН

*Аспирант кафедры уголовного процесса и криминалистики юридического
факультета Ереванского государственного университета,
Помощник судьи в Антикоррупционном суде РА*

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**THE BASIS AND CONDITIONS FOR APPLYING THE SPECIAL
PROCEDURE OF THE AGREEMENT PROCEDURE IN CRIMINAL
PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA**

**ОСНОВАНИЯ И УСЛОВИЯ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕДУРЫ
СОГЛАШЕНИЯ КАК ОСОБОГО ПОРЯДКА СУДЕБНОГО
РАЗБИРАТЕЛЬСТВА В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Ներածություն

Թեմայի արդիականությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ արդի ժամանակներում դատաքննության հատուկ ընթացակարգերը լայն քննարկման առարկա են դարձել իրավաբանների համար: Ընդ որում՝ այն պայմանավորված է մի կողմից՝ այդ ընթացակարգերի՝ օր օրի ավելի լայն կիրառություն ստանալու հանգամանքով, մյուս կողմից՝ այդ ինստիտուտները կարգավորող իրավական նորմերի և ընթացակարգերի՝ օրենքում առկա

թերություններով և դրանց լուծման ուղիների փնտրման հանգամանքով, ինչը շատ կարևոր տեսական և գործնական նշանակություն ունի դատաքննության նշված տեսակների զարգացման և արդյունավետության բարձրացման համար:

Սույն հոդվածում ներդրվել են այնպիսի գաղափարներ, որոնք, մեր կարծիքով, պետք է կյանքի կոչվեն, քանի որ դատաքննության ընթացակարգի պարզեցումը պետք է արվի այնպես, որ պարզեցման հետ մեկտեղ չկորչի ինքը՝ քրեական դատավարությունը:

Սույն աշխատանքում մեր առջև դրված խնդիր է պարզաբանել որոշ հիմնահարցեր, և նպատակ ունենք այդ ճանապարհով որոշակի լուծումներ առաջարկել՝ նպաստելով իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Հոդվածում քննարկվում են համաձայնեցման վարույթի հետ կապված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են համաձայնեցման վարույթի կիրառման հիմքը և պայմանները, կիրառման այլ պայմաններ նախատեսելը, ինչպես նաև այլ ընթացակարգային հարցեր:

Նշյալ հարցերի շրջանակն էլ կազմում է սույն աշխատանքի առարկան, որի մեթոդաբանական հիմքն են կազմում այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան, ձևական-տրամաբանականը:

Հիմնական հետազոտություն

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը համաձայնեցման վարույթ կիրառում է հանրային մեղադրանքով նախնական դատախոսների ընթացքում՝ մեղադրյալի միջնորդության հիման վրա:

Վերոնշյալ հոդվածում ամրագրված է համաձայնեցման վարույթի կիրառման հիմքը, այն է՝ մեղադրյալի միջնորդությունը: Նույն հոդվածն ամրագրում է նաև, թե քրեական դատավարության որ փուլում է կիրառելի համաձայնեցման վարույթը: Համաձայնեցման վարույթ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել նախնական դատախոսների ընթացքում, այսինքն՝ դատաքննության այն փուլում, երբ քրեական հետապնդման մարմիններն արդեն իսկ հավաքել են բավարար ապացույցներ, և դրանց հիման վրա հանրային մեղադրողը հանդես է գալիս դատարանում:

Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ դատարանը ձեռնպահ է մնում ապացույցների անմիջական հետազոտումից և պատժի նշանակումից, և խնդրի լուծումն արդեն թողնվում է հանրային մեղադրողի և մեղադրյալի, և ինչ-ինչ հանգամանքներում նաև տուժողի վրա: Դատարանն այս դեպքում վեր է ածվում համաձայնեցման վարույթ կիրառել թույլատրող կամ չթույլատրող, և կիրառելու դեպքում՝ դատավճիռ կայացնող մարմնի: Այսինքն՝ դատարանի առաջնային իրավասությունը՝ ապացույցների անմիջական հետազոտությունը, համաձայնեցման վարույթի կիրառման պայմաններում չի իրականացվում:

Հետևաբար, հարց է առաջանում՝ որքանով է նպատակահարմար համաձայնեցման վարույթի կիրառման հարցի լուծումն իրականացնել նախնական դատախոսների ընթացքում, երբ այն կարելի տեղափոխել քրեական դատավարության ավելի վաղ փուլ:

Հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածը հստակ սահմանում է նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում համաձայնեցման վարույթ չի կիրառվում: Այսինքն՝ դատարանի համար իմպերատիվ են այն պայմանները, որոնց առկայության դեպքում դատարանը մերժում է համաձայնեցման վարույթի կիրառման միջնորդությունը: Օրենսդիրը, սահմանելով վարույթի կիրառման հիմքը, սահմանում է նաև դրա մերժման հիմքերը, այն էլ՝ շատ հստակ: Այս ամենը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ դատարանն այստեղ իրականացնում է ոչ այնքան հայեցողական

լիազորություններ:

Համեմատության կարգով նշենք, որ համագործակցության վարույթ կիրառելու հարցի լուծումն իրականացվում է հսկող դատախազի կողմից՝ մինչդատական քրեական վարույթի ընթացքում, իսկ համաձայնեցման վարույթ կիրառելու հարցի լուծումը դատարանի կողմից՝ նախնական դատախոսների ընթացքում:

Մի կողմից՝ համագործակցության վարույթը վերաբերում է մինչդատական քրեական վարույթին, քանի որ մեղադրյալը նշված դեպքում պետք է գործուն աջակցություն ցուցաբերի քրեական հետապնդման մարմիններին մինչդատական քրեական վարույթի ընթացքում, իսկ համաձայնեցման վարույթը վերաբերում է դատաքննությանը, քանի որ սահմանում է, թե որ կարգով է իրականացվելու դատաքննությունը: Այս նպատակով էլ նշված հարցերի լուծումը համապատասխանաբար իրականացնում են կամ հսկող դատախազը, կամ դատարանը: Մյուս կողմից էլ՝ ինչպես համագործակցության վարույթը, այնպես էլ համաձայնեցման վարույթը քրեադատավարական կառուցակարգեր են, որոնք իրականացվում են առավելապես քրեական հետապնդման մարմինների և մեղադրյալի միջև:

Այսպես՝ համաձայնեցման վարույթ կիրառելու վերաբերյալ մեղադրյալի կողմից ներկայացված միջնորդությունը դատարանի կողմից բավարարելու դեպքում բանակցությունները սկսվում են մեղադրյալի և հանրային մեղադրողի միջև, և մինչև համաձայնության մասին արձանագրություն կազմելը և դատարան ներկայացնելն այդ ամբողջ գործունեությունն իրականացնողները հենց մեղադրյալն ու հանրային մեղադրողն են:

Գտնում ենք, որ համաձայնեցման վարույթ կիրառելու վերաբերյալ մեղադրյալի կողմից ներկայացված միջնորդության նախապատրաստումն ավելի նպատակահարմար է իրականացնել քրեական գործը դատարանին ներկայացնելուց առաջ և այդ իրավունքից օգտվել մինչև դատարանում գործի քննության նախնական դատախոսների փուլն սկսելը:

Համագործակցության պայմաններում մեղադրյալը համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, և այդ համագործակցությունն ուղղված է հանցանքը կատարած մյուս մասնակիցների բացահայտմանը և նրանց պատասխանատվության անխուսափելիության ապահովմանը: Ուստի, ինչպես արդեն վերը նշվեց, համագործակցության պայմաններում արդեն պարզ է, թե ինչու է նման համագործակցության կնքումը և հետագա գործունեությունն իրականացվում մինչդատական վարույթում՝ հանրային մեղադրողի և մեղադրյալի միջև:

Համաձայնության վարույթի պայմաններում, թեկուզև նման հատուկ կարգով գործի քննության իրականացումը վերաբերելի կամ հատուկ է դատաքննության տեսակին, սակայն բուն գործունեությունը ևս իրականացվում է մեղադրյալի և հանրային մեղադրողի կողմից՝ ի դեմս նախատեսվող պատժի տեսակի և չափի որոշման:

Գտնում ենք, որ առավել նպատակահարմար կլիներ համաձայնեցման վարույթի հարցի լուծումը տեղափոխել քրեական դատավարության առավել վաղ փուլ՝ մինչև նախնական դատախոսների փուլի սկսվելը, ինչն էապես կնպաստեր արդեն իսկ նման ինստիտուտի կյանքի կոչմանը, այն է՝ դատարանների անհարկի ծանրաբեռնվածության նվազմանը և քրեական վարույթի ողջամիտ ժամկետների պահպանմանը:

Վերը նշվածը, իհարկե, չի նշանակում, որ հսկող դատախազը պետք է որոշի, թե դատաքննության որ ձևն է կիրառելի, քանի որ այն ամեն դեպքում դատարանի իրավասությունն է: Պարզապես, քրեադատավարական գործող իրավակարգավորումների պայմաններում ստացվում է մի իրավիճակ, երբ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատարան, սկսվում են նախնական դատախոսները, և այդ ժամանակ է միայն մե-

ղադրյալը հնարավորություն ունենում միջնորդություն ներկայացնել դատարան՝ համաձայնեցման վարույթ կիրառելու վերաբերյալ:

Մինչդեռ՝ այն պայմաններում, երբ մեղադրյալի կողմից նման միջնորդություն ներկայացնելու իրավունքն իրացնելու հնարավորությունը ծագեր ավելի վաղ, այն է՝ նախաքննության ընթացքում, ավելի արդյունավետ կլիներ:

Բնականաբար, այստեղ կարող է ծագել այլ հարց, արդյո՞ք դատարանի կողմից համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության լուծումը մինչև նախնական դատախազի սկսվելը կլինի նպատակահարմար այն պարագայում, երբ դատարանը դեռևս ծանոթ չէ քրեական գործին, որով պայմանավորված՝ հնարավորություն կունենա արդյո՞ք արդար և անկողմնակալ որոշում կայացնելու: Մեր խորին համոզմամբ, փոփոխությունն այդքան էլ էական չէ, քանի որ, անկախ նրանից, համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության լուծումն իրականացվելու է նախաքննության ավարտին, թե նախնական դատախազների ընթացքում, մինչև նույնն է դատարանն ամբողջությամբ չի ուսումնասիրում գործի նյութերը, և նման հարցի քննությունը և լուծումն առավելապես դատավարական բնույթ է կրում: Նման դեպքում դատարանը որոշումը կայացնելու է՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքների բացակայությունը:

Իրավիճակը նույնն է նաև ԱՄՆ-ի օրենսդրությունում: Այստեղ ևս մեղքի ընդունման գործարքով վարույթը շարունակելու հարցի լուծումն իրականացվում է դատական վարույթի ընթացքում՝ չնայած այն հանգամանքին, որ մնացած գործողություններն այս դեպքում ևս իրականացվում են մեղադրողի և մեղադրյալի միջև:

Ուստի, ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ առավել նպատակահարմար է համաձայնեցման վարույթի կիրառման միջնորդության ներկայացումը և դադարեցնելու այս տեսակով գործի քննությունը շարունակելու հարցի լուծումը տեղափոխել քրեական դատավարության ավելի վաղ փուլ՝ ի շահ դատարանների անհարկի ծանրաբեռնվածության նվազեցման, արդյունավետության և օպերատիվության բարձրացման:

Համաձայնեցման վարույթի կիրառման պայմանները, որպես այդպիսին, առանձին չեն նշվում և չեն թվարկվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ համաձայնեցման վարույթի ինստիտուտը կարգավորող իրավանորմերում, սակայն այդ պայմանների առանձնացումը բխում է նույն օրենսգրքի 459-րդ հոդվածի բովանդակությունից:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը բավարարում է համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, (...) եթե մեղադրյալը համաձայն է իրեն մեղսագրվող արարքին, միջնորդությունը ներկայացրել է կամավոր և գիտակցում է իր միջնորդության բնույթը և հետևանքները:

Վերոնշյալ հոդվածից բխում է, որ համաձայնեցման վարույթի կիրառման համար պետք է միաժամանակ առկա լինեն 3 պայմաններ, դրանք են՝

1. մեղադրյալի համաձայնությունն իրեն մեղսագրվող արարքին,
2. միջնորդության կամավոր ներկայացումը,
3. մեղադրյալի՝ իր կողմից ներկայացված միջնորդության բնույթի և հետևանքների գիտակցումը:

Այստեղ այլ հարց է առաջանում: Եթե մեղադրյալն ինքն է միջնորդություն ներկայացրել առ այն, որ համաձայն է իրեն մեղսագրվող արարքին, որն է նպատակը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել պայման, ըստ որի՝ մեղադրյալը պետք է համաձայն լինի իրեն մեղսագրվող արարքին: Այսպես թե այնպես, միջնորդությունը

ներկայացնողը հենց մեղադրյալն է:

Ստացվում է, երբ մեղադրյալը միջնորդություն է ներկայացնում, որ ինքը համաձայն է իրեն մեղսագրվող արարքին, դրանից հետո դատարանին օրենքը պահանջ է ներկայացնում՝ միջնորդությունը բավարարել, եթե մեղադրյալը համաձայն է իրեն մեղսագրվող արարքին:

Սա, ըստ էության, համաձայնեցման վարույթի՝ ԱՄՆ-ում գործող համարժեք ինստիտուտի՝ մեղքի ընդունման գործարքի իրավակարգավորումներից վերցված իրավանորմ է, քանի որ ԱՄՆ օրենսդրությամբ սահմանված է, որ հանրային մեղադրողը դատական վարույթի սկզբում հարց է ուղղում մեղադրյալին՝ արդյոք վերջինը համաձայն է իրեն առաջադրված մեղադրանքին, թե ոչ:

Որպես այդպիսին՝ վերոնշյալ պայմանը՝ մեղադրյալի համաձայնությունն իրեն առաջադրված մեղադրանքին, որևէ հակասություն չի առաջացնում և որևէ բաց տեղ չի թողնում: Պարզապես, այն դեպքում, երբ մեղադրյալը ինքն է ներկայացնում համաձայնեցման վարույթ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը, ստացվում է, որը ինքն արդեն իսկ տվել է իր համաձայնությունն առաջադրված մեղադրանքի մասով:

Այլ հարց է, որ մեղադրյալը պետք է նշված միջնորդությունը ներկայացնի կամավոր, այսինքն՝ դատավարական կարգով համաձայն լինի իրեն առաջադրված մեղադրանքի հետ և այն լինի իր կամարտահայտության արդյունքը: Սրա հետ կապված էլ գործում է հաջորդ պայմանը՝ միջնորդության կամավոր ներկայացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը սահմանում է, որ համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե, առերևույթ, հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, և համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը: Ինչպես տեսնում ենք սույն հոդվածի իրավակարգավորումից, համաձայնեցման վարույթի կիրառման համար տուժողի համաձայնությունը ևս պարտադիր է, բայց միայն այն դեպքում, երբ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ:

Այն ոչ այնքան համաձայնեցման վարույթի կիրառման պայման է, ինչը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի կառուցվածքից և բովանդակությունից, որքան բացառող հանգամանք: Ամեն դեպքում, նշված հանգամանքը կհամարվի պայման, թե բացառող հանգամանք, որևէ էական փոփոխություն տեղի չի ունենա: Համաձայնեցման վարույթի կիրառման նախադրյալներից մեկն էլ տուժողի համաձայնությունն է հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չլինելու պարագայում:

Իսկ այն դեպքում, երբ վնասը լրիվ ծավալով հատուցված է, տուժողն արդեն իսկ չի մասնակցում վարույթային գործողություններին, այլ այս դեպքում բանակցությունները տեղի են ունենում մեղադրյալի, վերջինի պաշտպանի և հանրային մեղադրողի միջև:

Անդրադառնալով այն հարցին, թե որքանով է նպատակահարմար տուժողի «կարծիքը հաշվի չառնելն այս դեպքում», գտնում ենք, որ կատարված հանցագործության դեպքում տուժողը հանդիսանում է շահագրգիռ անձ: Ինչ-ինչ դեպքերում նա շահագրգռված է լինում, որպեսզի մեղադրյալը ստանա իր պատիժը, սակայն լինում են դեպքեր, երբ տուժողին մեծ հաշվով չի հետաքրքրում այն: Բոլոր դեպքերում այն տուժողի սուբյեկտիվ վերաբերմունքն է: Սակայն որքան էլ տուժողը, որպես քրեական գործով վարույթի մասնավոր անձ, սուբյեկտիվ շահագրգռվածություն ունենա, ոչ մի պարագայում չի նշանակում, որ կարելի է անտեսել նրա շահերը:

Այսպես՝ հանցագործությամբ անձին կարող է պատճառվել ոչ միայն նյութական, այլև բարոյական, ֆիզիկական և այլ տեսակի վնաս: Այն դեպքում, երբ պատճառված նյութական վնաս-

սը կարելի է տարբեր եղանակներով հատուցել, այդ թվում՝ այնպիսի, ինչպիսին պատճառվել է, նույնը չի կարելի ասել բարոյական վնասի դեպքում:

Կարելի է ասել, որ որպես պատժի նպատակ, այն է՝ սոցիալական արդարության վերականգնում, համաձայնեցման վարույթի դեպքում պետք է նախատեսել, ի թիվս այլնի, տուժողին պատճառած վնասի պարտադիր հատուցումը: Ընդ որում, այդ հատուցումը չի սահմանափակվում միայն նյութական փոխհատուցման տեսքով: Հետևաբար, համաձայնեցման վարույթի պարագայում տուժողի շահերը հաշվի չառնելը, մեղմ ասած, ճիշտ չէ:

Համեմատության կարգով նշենք, որ, օրինակ, ԱՄՆ-ի օրենսդրությունում տուժողի կարծիքը համաձայնեցման վարույթ կիրառել-չկիրառելու հարցում ընդհանրապես հաշվի չի առնվում: Մինչդեռ՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքն ուղղակիորեն պայման է նախատեսում, որ դատաքննության նշված հատուկ կարգը չի կարող կիրառվել, եթե դրա դեմ առարկում է տուժողը¹:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանափակում է համաձայնեցման վարույթի կիրառումը հանրային մեղադրանքով դատալուծումների դեպքում: Այսինքն՝ մի դեպքում, երբ տուժողը հանդես է գալիս որպես մասնավոր մեղադրող, կարող է շահագրգռված լինել այն հանգամանքով, որ մեղադրյալն ստանա իր պատիժը կատարած հանցավոր իրավախախտման համար, մեկ այլ դեպքում՝ ոչ: Չնայած, որ երկու դեպքում էլ տուժողին կարող է հասցվել ցանկացած տեսակի վնաս: Ավելացնենք նաև այն, որ ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը նման սահմանափակում չի նախատեսում: Ավելին՝ վերջինի՝ դատաքննության նշված հատուկ կարգի կիրառումը սահմանափակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների շրջանակով:

Նշված պայմանի հետ կապված իրավաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հնչեցվել, և մեծամասամբ՝ բացասական: Ընդ որում, բացասական կարծիքներ էլ մեկնաբանվում են՝ պայմանավորված իբրև թե մեղադրյալի իրավունքների խախտմամբ:

Այսպես՝ Ա.Ռ.Պրուսսը գրում է՝ քրեադատավարական օրենքը չի պահանջում, որ դատաքննության հատուկ կարգ կիրառելու դեպքում կողմերի «ակտիվ պայքար» իրականանա: Հետևաբար, խոսք չի կարող գնալ տուժողի՝ դատաքննության հատուկ կարգ կիրառելու հետ կապված համաձայնության մասին, քանի որ նման հանգամանքը մեղադրյալի կողմից օրենքով նախատեսված իր իրավունքն իրականացնելը կախվածության մեջ կդնի տուժողից: Այդ դեպքում էլ կխախտվի Սահմանադրությամբ նախատեսված՝ օրենքի և դատարանի առջև բռնի հավասարության սկզբունքը²:

Ա.Գրաչինենկոն առաջարկում է ոչ միայն տուժողի, այլև մեղադրողի համաձայնությունը բացառել դատաքննության նշված տեսակի կիրառման պայմաններում: Ընդ որում, վերջինի կարծիքով, առավել նպատակահարմար կլիներ, որ դատախազը գործը դատարան ուղարկելու ժամանակ միայն իր կարծիքը նշեր դատաքննության հատուկ կարգ կիրառելու վերաբերյալ³:

Տուժողի համաձայնությունը դատաքննության հատուկ կարգի կիրառման պայմանների

¹ См. "Уголовно-процессуальный кодекс Российской Федерации" от 18.12.2001 N 174-ФЗ, ч.314, ч.1 https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/d0622d680378b0b2dc5c8c9a2389f1507b5e48b1/ (վերջին մուտք՝ 01.05.2025 թ.):

² Прусс А. Р., Основания и условия применения особого порядка судебного разбирательства... при согласии обвиняемого с предъявленным ему обвинением // Барнаул, 2017, էջ 80:

³ См. Гричаниченко А., Особый порядок судебного производства нуждается в совершенствовании // Уголовное право. — 2004. — № 3, էջ 76:

շարքում չդասելու հետ կապված գրականության մեջ նշվում է, որ տուժողը խիստ սուբյեկտիվ վերաբերմունք է ունենում հարցի նկատմամբ, ինչը խանգարում է մեղադրյալի կողմից իր իրավունքների իրացմանը⁴:

Մենք չենք կիսում գրականության մեջ առկա այս տեսակետերը:

Գտնում ենք, որ տուժողի շահերն ամեն դեպքում չպետք է անտեսվեն, քանի որ ինչպես պատճառված վնասը, այնպես էլ դրա հատուցումը կարող է լինել տարբեր բնույթի, տեսակի և աստիճանի:

Բացի այդ, եթե մրցակցությունը գնում է երկու՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, իսկ համաձայնեցման վարույթը, ինչպես գիտենք, շեղվում է նշված կանոնից, ուստի երկու կողմերի համաձայնությունը, այդ թվում՝ տուժողինը, պետք է պարտադիր լինի:

Հակառակ դեպքում՝ կատարվի մի իրավիճակ, երբ դատաքննության ընդհանուր կարգ կիրառելու պայմաններում, տուժողը, անկախ այն հանգամանքից՝ իրեն պատճառված վնասը հատուցվել է, թե ոչ, կարող է հանդես գալ դատարանում՝ ընդդեմ մեղադրյալի, իսկ դատաքննության հատուկ կարգ կիրառելու դեպքում տուժողը դուրս է մնում նման «հակամարտությունից»:

Հետևաբար, գտնում ենք, որ տուժողի համաձայնությունը համաձայնեցման վարույթ կիրառելու դեպքում բոլոր պարագաներում պետք է լինի պարտադիր:

Վերոշարադրյալի հիման վրա՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «5. եթե առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, ինչպես նաև համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը»:

Հարկ է նշել, որ ներկայումս ևս ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը դատաքննության այս տեսակի կիրառելիություն նախատեսում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար: Մինչդեռ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ի թիվս հանցագործության վերոնշյալ տեսակների, նախատեսում է նաև համաձայնեցման վարույթի կիրառման հնարավորությունը ծանր հանցագործությունների համար:

Այսպես՝ հանցագործությունների դասակարգումն իրականացվում է ըստ դրանց հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի, իսկ համաձայնեցման վարույթի իմաստը, ի թիվս այլնի, հանցանք կատարած անձին ավելի մեղմ պատիժ նշանակելն է այն պարագայում, երբ անձն ընդունում է իր մեղավորությունը: Մեր կարծիքով, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի մոտեցումն այս պարագայում ավելի իրատեսական է՝ սահմանափակելով դատաքննության այս տեսակի կիրառելիությունը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով:

Վերոշարադրյալի հիման վրա՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «1. եթե մեղադրյալը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու համար»:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ չի կարող իրականացվել, եթե մեղադրյալին մեղսագրվող արարքով

⁴ Sfin Pрусс А. Р., Основания и условия применения особого порядка судебного разбирательства... при согласии обвиняемого с предъявленным ему обвинением // Барнаул, 2017, էջ 80:

Վնաս է պատճառվել մասնավոր անձի շահերին:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածը ևս լրացնել նշված նորմով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանավորված հասարակության մեջ առկա կարծրատիպերով՝ տուժողները մեծամասամբ բողոքներ չեն ունենում քրեադատավարական մակարդակով, այլ փնտրում են բողոքներն այլ մակարդակով լուծելու տարբերակներ: Մինչդեռ՝ տուժողի բողոքի բացակայությունը՝ պայմանավորված վերը նշված հանգամանքով, չի նվազեցնում ոչ արարքի, ոչ էլ արարքը կատարած անձի հանրային վտանգավորությունը:

Տուժողների կողմից բողոքի բացակայությունը կարող է պայմանավորվել ոչ միայն մեղադրյալի կողմից ապօրինի ազդեցությամբ, այլ նաև տուժողի համոզմունքով առ այն, որ իր կողմից ներկայացված բողոքի դեպքում մեղադրյալը հնարավոր է հետագայում իր նկատմամբ ապօրինի ազդեցություն գործադրի:

Ուստի, գտնում ենք, որ համաձայնեցման վարույթը պետք է կիրառություն ունենա այն դեպքում, երբ մասնավոր շահերին վնաս չի պատճառվել:

Մեր դիրքորոշումը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. երբ հանցագործության արդյունքում վնասը հասցվել է հանրային շահերին, այդ շահերի պաշտպանությամբ հանդես է գալիս մասնագիտացված պետական մարմինը՝ հանրային մեղադրողը (դատախազը), որի վրա ապօրինի ազդեցություն գործադրելու հավանականությունը գործնականում գրեթե բացակայում է:

Հաշվի առնելով նշվածը՝ գտնում ենք, որ համաձայնեցման վարույթը չպետք է կիրառվի այն դեպքերում, երբ հանցագործությամբ վնաս է պատճառվել մասնավոր շահերին: Այս տեսակետից ելնելով՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ. **«6) եթե կատարված հանցավոր արարքով մասնավոր շահերին վնաս չի պատճառվել»:**

Քննարկելով համաձայնեցման վարույթի կիրառման իրավաչափությունը, այն դիտարկելով պատժի նպատակների իրացման տեսանկյունից՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք կարելի է կիրառել համաձայնեցման վարույթ այն դեպքում, երբ այն արդեն մեկ անգամ կիրառվել է նույն անձի նկատմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված համաձայնեցման վարույթի նորմատիվ կարգավորումից հետևում է, որ նման սահմանափակում օրենսդրորեն նախատեսված չէ, և ինստիտուտը կարող է կրկին կիրառվել: Համեմատության համար կարելի է նշել, որ գործուն զղջալու ինստիտուտը թույլատրվում է կիրառել միայն մեկ անգամ՝ որպես արտոնություն, ինչը սահմանափակում է դրա կրկնակի կիրարկումը:

Մինչդեռ, համաձայնեցման վարույթի պարագայում օրենսդիրը նման սահմանափակում չի նախատեսել, ինչն առաջացնում է կիրառման հնարավորության հարցեր և տեսական քննարկման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով քրեական պատասխանատվության նպատակների համարժեք իրացման պահանջը:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքը, նախատեսելով գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունը, սահմանում է նաև, որ, եթե անձը մեկ անգամ արդեն իսկ ազատվել է քրեական պատասխանատվությունից գործուն զղջալու հիմքով, երկրորդ անգամ արդեն նույն իրավիճակը կրկնվել չի կարող, ինչը պայմանավորված

է այն հանգամանքով, որ միևնույն է պատժի նպատակները չեն իրականացել, այսինքն՝ անձը չի ուղղվել, հետևաբար՝ նման անձին կրկին անգամ հնարավորություն ընձեռելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը բացակայում է:

Մինչդեռ՝ համաձայնեցման վարույթի պարագայում, երբ հիմքերը և պայմանները նույնն են, այդպիսի սահմանափակում օրենքը չի նախատեսում:

Կարծում ենք՝ համաձայնեցման վարույթի պարագայում ևս նպատակահարմար կլիներ նման սահմանափակում նախատեսելը:

Մեր դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համաձայնեցման վարույթ կիրառելու դեպքում անձի նկատմամբ չի կիրառվում խիստ պատիժ, քանի որ վերջինն ընդունում է իր մեղքը, հատուցում կամ այլ կերպ հարթում է պատճառված վնասը, որով պայմանավորված՝ արդեն իսկ նվազում է տվյալ անձի հանրային վտանգավորության աստիճանը, իսկ եթե այս ամենից հետո անձը կրկին նոր հանցանք է կատարում, ստացվում է, որ անձին կրկին անգամ նման հնարավորություն ընձեռելու դեպքում հավանական է, որ վերջինը կրկին կկատարի նոր հանցանք և պատժի նպատակները չեն իրականանա:

Ասվածը, մեր կարծիքով, հատկապես արդիական է այն պայմաններում, երբ անձը, իրեն առաջադրված մեղադրանքն ընդունելով, ուղղակի ձգտում է շահավետության: Մինչդեռ՝ քրեական դատավարությունը պետք է գերծ մնա առհասարակ «շահավետ գործարքներից» և նմանատիպ այս կամ այն հանգամանքներից:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե ինչ խնդիր է լուծում դատավարությունը, օրինակ՝ ԱՄՆ-ում դատական քննության գլխավոր խնդիրը վեճերի լուծումն է: Այսինքն՝ հանցագործությունը դիտարկվում է որպես քրեաիրավական վեճ, իսկ դատավարությունը՝ որպես այդ վեճի լուծման ընթացակարգ: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը դեռևս շարունակում է պահպանել ճշմարտության բացահայտումը՝ որպես քրեական գործի լուծման նպատակ, իսկ քրեաիրավական վեճի գաղափարն առավելապես ներդրված է մասնավոր մեղադրանքի վարույթի հիմքում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «7. Եթե նախկինում նույն անձի նկատմամբ կիրառվել է համաձայնեցման վարույթ»:

Եզրակացություն

Համաձայնեցման վարույթի ինստիտուտի գործող կառուցակարգերի և իրավանորմերի, տեսական գրականության, արտասահմանյան փորձի ուսումնասիրության արդյունքում կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1. Գտնում ենք, որ առավել նպատակահարմար է համաձայնեցման վարույթի կիրառման միջնորդության ներկայացումը և դատաքննության այս տեսակով գործի քննությունը շարունակելու հարցի լուծումը տեղափոխել քրեական դատավարության ավելի վաղ փուլ՝ ի շահ դատարանների անհարկի ծանրաբեռնվածության նվազեցման, արդյունավետության և օպերատիվության բարձրացման:

2. Առաջարկում ենք՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «6. Եթե կատարված հանցավոր արարքով մասնավոր շահերին վնաս չի պատճառվել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «5. Եթե առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ

պատճառված փաստը հատուցված չէ, ինչպես նաև համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «1. Եթե մեղադրյալը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «7. Եթե նախկինում նույն անձի նկատմամբ կիրառվել է համաձայնեցման վարույթ»:

Ամփոփագիր: Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համաձայնեցման վարույթի՝ որպես դատաքննության հատուկ կարգի կիրառման հիմքն ու պայմանները կարգավորող իրավական նորմերի հետ կապված մի շարք հարցեր: Աշխատանքի կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում վեր են հանվում և հետազոտվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված համաձայնեցման վարույթի՝ որպես դատաքննության հատուկ կարգի կիրառման հիմքն ու պայմանները կարգավորող իրավանորմերի, կառուցակարգերի առկա թերությունները և խնդրահարույց հարցերը, ինչպես նաև կատարվում են եզրակացություններ և առաջարկություններ:

Այս առումով հոդվածն արդիական է, քանի որ տրվող եզրակացությունները և առաջարկությունները կարող են տեսական աղբյուր հանդիսանալ «Համաձայնեցման վարույթ» ինստիտուտի վերաբերյալ:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են համաձայնեցման վարույթով գործի քննությունը շարունակելու հարցի լուծումը քրեական դատավարության ավելի վաղ փուլ տեղափոխելը, համաձայնեցման վարույթը բացառող այլ հանգամանքներ սահմանելը, մասնավորապես՝ համաձայնեցման վարույթը նույն անձի նկատմամբ մեկ անգամ կիրառելու սահմանափակում նախատեսելը, և այլն:

Annotation. The aim of the article is to analyze several issues related to the legal norms regulating the grounds and conditions for applying the special procedure of trial through the plea bargaining process, as provided by the Criminal Procedure Code of the Republic of Armenia (RA). The practical significance of this work lies in the fact that it identifies and examines the existing shortcomings and problematic aspects of the legal norms and mechanisms governing the plea bargaining process as stipulated in parts 1 and 2 of Article 458 of the RA Criminal Procedure Code. Based on this, conclusions and recommendations are made.

In this regard, the article is relevant, as the conclusions and proposals presented may serve as a theoretical source on the “plea bargaining procedure” institute.

The article discusses issues such as shifting the decision on continuing a case through the plea bargaining procedure to an earlier stage of criminal proceedings, establishing other circumstances that exclude the application of plea bargaining, in particular, introducing a limitation that the procedure can be applied only once with respect to the same person, among others.

Аннотация. Цель статьи – проанализировать ряд вопросов, связанных с правовыми нормами, регулирующими основания и условия применения особого порядка судебного разбирательства через процедуру соглашения, предусмотренную Уголовно-процессуальным кодексом Республики Армения.

Практическая значимость работы заключается в выявлении и исследовании существующих недостатков и проблемных аспектов правовых норм и механизмов, регулирующих процедуру соглашения, предусмотренную частью 1 и частью 2 статьи 458 УПК РА, а также в формулировке выводов и предложений.

В этом плане статья является актуальной, поскольку предлагаемые выводы и рекомендации могут служить теоретическим источником по институту «процедуры соглашения».

В статье рассматриваются такие вопросы, как перенос принятия решения о продолжении рассмотрения

дела в порядке соглашения на более раннюю стадию уголовного процесса, установление иных обстоятельств, исключающих применение процедуры соглашения, в частности, ограничение на возможность применения процедуры соглашения к одному и тому же лицу только один раз и др.

Բանալի բառեր – դատաքննության հարուկ կարգ, համաձայնեցման վարույթ, նախնական դատախազություն, գործուն զղջալ:

Keywords: *special procedure in trial, plea bargaining procedure, preliminary hearings, active remorse or genuine remorse.*

Ключевые слова: *особый порядок судебного разбирательства, процедура соглашения, предварительные судебные слушания, активное раскаяние.*

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին, ՀՕ-306-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205057> (վերջին մուտք՝ 01.05.2025 թ.)
2. ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին, ՀՕ-199-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204754> (վերջին մուտք՝ 01.05.2025 թ.)
3. “Уголовно-процессуальный кодекс Российской Федерации” от 18.12.2001 N 174-ФЗ, статья 314, ч. 1 https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/d0622d680378b0b2dc5c8c9a2389f1507b5e48b1/ (վերջին մուտք՝ 01.05.2025 թ.)
4. Гричаниченко А. Особый порядок судебного производства нуждается в совершенствовании // Уголовное право. — 2004. — № 3, էջ 76:
5. Прусс А. Р. Основания и условия применения особого порядка судебного разбирательства... при согласии обвиняемого с предъявленным ему обвинением // Барнаул, 2017, էջ 80:

Հարոյան Հ. – ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ haykush.a.haroyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 11.05.2025 թ., տրվել է գրախոսության 11.05.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ենգիբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: